ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-79/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությամբ ներկայացված «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01564583) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-79/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-79/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 27.02.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրության հիման վրա, 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

2. «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 03.06.2016թ. N 01/04.2/2180-16 գրությամբ դիմել է «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ին, սակայն վերջինիս կողմից պատասխան չի ստացվել:

«Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 27.10.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-79/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը: Նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցելիս որևէ խախտում թույլ չի տվել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքները համարժեք են եղել հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքներին:

Ընկերության ներկայացուցիչը, 31.10.2016թ. Կենտրոնին ուղղված գրությամբ խնդրել է ժամանակ տրամադրել՝ հայտով ներկայացված ապրանքների համարժեքությունը հիմնավորող եզրակացություն ներկայացնելու համար և կցել է փորձաքննություն իրականացնող մարմնին՝ «Անիկոմ» ՍՊԸ-ին ուղղված գրության պատճենը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 27.10.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-79/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԳԲԽ-79/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.02.2017թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությամբ ներկայացված «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01564583) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. **<u>ՍՑ-ԳԲԽ-79/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությամբ ներկայացված «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտեր է ներկայացրել «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):
- «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ն հայտերի Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություններով հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտերով առաջարկվող ՝ 14, 97,98,93,40 և 84 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը

համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերի հրավերներով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

- Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները 22.01.2015թ. ժամը 11:00-ին, ժամը 11:15-ին և ժամը 11:30-ին կայացած նիստերի թիվ 4 արձանագրությունների համաձայն՝ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում ներկայացված հայտերը մերժվել են՝ հրավերների տեխնիկական բնութագրերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:
- «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 27.10.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-79/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցելիս Ընկերությունը որևէ խախտում թույլ չի տվել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքները համարժեք են եղել հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքներին: Միաժամանակ, Ընկերությունը խնդրեց ժամանակ տրամադրել՝ հայտով ներկայացված ապրանքների համարժեքությունը հիմնավորող եզրակացություն ներկայացնելու համար:
- Ընկերությունը 03.02.2017թ. Կենտրոնին ուղղված թիվ 09/1249-17 գրությամբ ներկայացրել է «Անիկոմ» ՍՊԸ-ի կողմից կատարված ապրանքագիտական փորձաքննությունների եզրակացությունների պատճենները:
- Ներկայացված եզրակացությունների համաձայն՝ համապատասխան ապրանքատեսակների փորձաքննության աշխատանքները սկսվել են 01.11.2016թ., ավարտվել՝ 14.12.2016թ.:
- «Անիկոմ» ՍՊԸ-ի կողմից կատարված ապրանքագիտական փորձաքննությունների եզրակացությունները ստորագրվել են Արայիկ Լյուդվիկի Ստեփանյանի կողմից, ով հանդիսանում է հետազոտությունների և դատական փորձաքննությունների կենտրոն՝ «Անիկոմ» ՍՊԸ-ի ապրանքագիտական փորձաքննությունների բաժնի պետ՝ պայմանագրային հիմունքներով, բարձրագույն

տնտեսագիտական կրթությամբ, ձեռնարկությունների էկոնոմիկա և կառավարում մասնագիտությամբ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված **16-01**՝ (Արդյունաբերական (ոչ պարենային) ապրանքների, արդյունաբերության տարբեր ճյուղերի օբյեկտների և արտադրանքի՝ շին. արդյունաբերական՝ շինարարական կառույցների, հանքարդյունաբերական՝ հանքերի, գյուղարդյունաբերության օբյեկտների, կապակցված տարածքների և այլ հողատարածքների հետազոտություն, այդ թվում՝ որակային հատկանիշների և արժեքային ցուցանիշների որոշման նպատակով) և **16-02**՝ (Տրանսպորտային միջոցների, սարք-սարքավորումների, մեքենա-մեխանիզմների հետազոտություն, այդ թվում արժեքային ցուցանիշների որոշման նպատակով) ենթատեսակների դատաապրանքագիտական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ՝ վկայականներ N 211 և N 298, ընդհանուր մասնագիտական աշխատանքային և դատափորձագիտական աշխատանքի 16 տարվա ստաժով, ՀՀ «Ավտոապահովագրողների բյուրո» ԻԱԿ-ի կողմից որակավորված, ԱՊՊԱ ոլորտում բացի անշարժ գույքից ցանկացած այլ գույքային պատճառված վնասներ գնահատող փորձագետ:

- «Անիկոմ» ՍՊԸ-ի և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի միջև 01.11.2016թ. կնքված N ԱՔ 11/16 ԱԳ և N ԱՔ 11/16 ԱԳ-1 պայմանագրերի հիման վրա կատարված N ԱՔ 11/16 ԱԳ-11 և N ԱՔ 11/16 ԱԳ-12 ապրանքագիտական փորձաքննությունների եզրակացությունների համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված «RUSCH» մակնիշի հետազոտման օբյեկտները համարժեք են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բժշկական պարագաների, գործիքների, ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի ընթացակարգով արտացոլված՝ Տեխնիկական բնութագրում նշված /Portex մակնիշի կամ համարժեք/ ներշնչափողային խողովակների բնութագրիչ հատկանիշներին, իսկ փորձաքննությանը ներկայացված «ARROW» մակնիշի հետազոտման օբյեկտը ապրանքագիտական տեսանկյունից համարժեք է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բժշկական պարագաների, գործիքների, ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով

հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի ընթացակարգով արտացոլված՝ Տեխնիկական բնութագրում նշված /233/20/70Deltec կամ համարժեք/ ապրանքատեսակին:

- Փորձաքննությանը ներկայացված «VISISTAT®35R» մակնիշի հետազոտման օբյեկտը իր նշանակությամբ, օգտագործմամբ ապրանքագիտական տեսանկյունից համարժեք է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բժշկական պարագաների, գործիքների, ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի ընթացակարգով արտացոլված՝ Տեխնիկական բնութագրում նշված /Մաշկի ստեպլեր 3.9մմ, 5.7մմ, ֆիքսված աշխատող մասով կամ համարժեք N 6 կամ այլ քանակի փաթեթավորումով/ ապրանքատեսակին:

6. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-79/16 բողոքը, գտնում է, որ այն ենթակա է մերժման՝ հետևյալ հիմնավորմամբ.

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրությունը և կից փաստաթղթերը, «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի 03.02.2017թ. թիվ 09/1249-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***<u>եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:</u>***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցության հայտերի Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություններով «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտերով առաջարկվող՝ 14, 37, 38, 39, 40 և 84 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերի հրավերներով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները 22.01.2015թ. ժամը 11:00-ին, ժամը 11:15-ին և ժամը 11:30-ին կայացած նիստերի թիվ 4 արձանագրությունների համաձայն՝ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում ներկայացված հայտերը մերժվել են՝ հրավերների տեխնիկական բնութագրերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 27.10.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-79/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցելիս Ընկերությունը որևէ խախտում թույլ չի տվել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքները համարժեք են եղել հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքներին: Միաժամանակ, Ընկերությունը խնդրել է ժամանակ տրամադրել՝ հայտով ներկայացված ապրանքների համարժեքությունը հիմնավորող եզրակացություն ներկայացնելու համար:

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն 03.02.2017թ. Կենտրոնին ուղղված թիվ 09/1249-17 գրությանը կից ներկայացրել է «Անիկոմ» ՍՊԸ-ի կողմից կատարված N ԱՔ 11/16 ԱԳ-11 և

N ԱՔ 11/16 ԱԳ-12 ապրանքագիտական փորձաքննությունների եզրակացությունների պատճենները:

«Անիկոմ» ՍՊԸ-ի և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի միջև 01.11.2016թ. կնքված N ԱՔ 11/16 ԱԳ և N ԱՔ 11/16 ԱԳ-1 պայմանագրերի հիման վրա կատարված N ԱՔ 11/16 ԱԳ-11 և N ԱՔ 11/16 ԱԳ-12 ապրանքագիտական փորձաքննությունների եզրակացությունների համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված «RUSCH» մակնիշի հետազոտման օբյեկտները համարժեք են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բժշկական պարագաների, գործիքների, ծախսվող նյութերի ձեռքբերման՝ նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի ընթացակարգով արտացոլված՝ Տեխնիկական բնութագրում նշված /Portex մակնիշի կամ համարժեք/ ներշնչափողային խողովակների բնութագրիչ հատկանիշներին, իսկ փորձաքննությանը ներկայացված «ARROW» մակնիշի հետազոտման օբյեկտը ապրանքագիտական տեսանկյունից համարժեք է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բժշկական պարագաների, գործիքների, ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի ընթացակարգով արտացոլված՝ Տեխնիկական բնութագրում նշված /233/20/70Deltec կամ համարժեք/ ապրանքատեսակին:

Փորձաքննությանը ներկայացված «VISISTAT®35R» մակնիշի հետազոտման օբյեկտը իր նշանակությամբ, օգտագործմամբ ապրանքագիտական տեսանկյունից համարժեք է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բժշկական պարագաների, գործիքների, ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի ընթացակարգով արտացոլված՝ Տեխնիկական բնութագրում նշված /Մաշկի ստեպլեր 3.9մմ, 5.7մմ, ֆիքսված աշխատող մասով կամ համարժեք N 6 կամ այլ քանակի փաթեթավորումով/ ապրանքատեսակին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Անիկոմ» ՍՊԸ-ի կողմից կատարված N ԱՔ 11/16 ԱԳ-11 և N ԱՔ 11/16 ԱԳ-12 ապրանքագիտական փորձաքննության արդյունքների պայմաններում, չի կարող հաստատված փաստ համարվել, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ ներկայացրել է կեղծ տվյալ, ուստի և Ընկերությանը չի կարող վերագրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությամբ ներկայացված «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01564583) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ոսկանյան Լուսինե**

Անդամ՝ **Պողոսյան Լիդիա**